

ԱՐՄԱՎԻՐԻ Ռ.ԵՂՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ1  
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Դեռահասը ավագ դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Սեդա Աղաբաբյան

Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան հ1. միջնակարգ դպրոց

Մենթոր՝ Նարինե Վասիլյան

Արմավիր 2022



## Բովանդակություն

<b>1.Ներածություն.....</b>	<b>3</b>
1.1 Ծրագրի նպատակը.....	3
<b>Գլուխ 2. Դեռահասություն.....</b>	<b>4</b>
2.1. Դեռահասների տարածված խնդիրները.....	5
2.2. Դեռահասության ճգնաժամը և պատճառները.....	6
2.3. Դեռահասի հետ աշխատելու մեթոդներ.....	7
<b>Գլուխ3.Ժամանակակից դեռահասի առօրյան.....</b>	<b>9</b>
3.1. Ինտերնետից կախվածություն.....	10
3.2. Սերունդների հակամարտություն.....	10
3.3. Ի՞նչ է պետք դեռահասին մեծահասակից.....	12
3.4.Ի՞նչ են զգում ծնողները.....	12
<b>Եզրակացություն.....</b>	<b>13</b>
<b>Օգտագործված գրականության ցանկ.....</b>	<b>14</b>



## Ներածություն

Ղեռահասը ավագ դպրոցում թեմայով հետազոտական աշխատանքը պատմում է, թե ինչ է <ղեռահասությունը>: Այս աշխատանքը ներկայացնում է ավագ դպրոցում դեռահասների վարքագծի ինչպես նաև նրանց ծնողների խնդիրների լուծման հնարավոր տարբերակները:

Այս հետազոտական աշխատանքով փորձեցի վեր հանել ավագ դպրոցի սոցիալական պատկերը ժամանակակից դպրոցի պայմաններում: Բացի այդ մեզ ուսուցիչներին հետաքրքրում են այն խնդիրները, որոնց բախվում են դեռահասները իրենց կյանքում, և այն ուղիները, որոնցով նրանք լուծում են ծագած դժվարությունները, հասկանում դեռահասի խնդիրները:

Այս աշխատանքը պարունակում է տեսական նյութ, որը թույլ է տալիս ծանոթանալ դեռահասության առանձնահատկություններին, ինչպես նաև պատմում է դեռահասների առօրյայի, նրա գործունեության, ճգնաժամի և նախասիրությունների մասին: Առանձնակի ուշադրություն է դարձվում սերունդների հակամարտության խնդիրներին:

### **Ծրագրի նպատակը.**

1. Պարզել, և վեր հանել երիտասարդների հիմնական խնդիրները
2. Պարզել հետազոտության հիմնական մտահոգությունների հաղթահարման ուղիները
3. Բացահայտել, վերլուծել երիտասարդության հիմնական հեռանկարները.
4. Ներկայացնի երիտասարդության հիմնական մարտահրավերները.
5. Եզրակացություն արվի ուսումնասիրված նյութի վերաբերյալ:



## Գլուխ 2. Ղեռահասություն

Ղեռահասություն հանցակարգը հայտնվել է 20-րդ դարի սկզբին: Արդեն այդ ժամանակ ղեռահասությունը համարվում էր խնդիր: Իսկ 21-րդ դարում ղեռահասության խնդիրն ավելի է սրվում: Թե ինչն է մտահոգում ժամանակակից երիտասարդներին այսօր, և ինչ է իրենց հետաքրքրում միայն իրենք լավ գիտեն:

«Ղեռահասը աշխարհն այլ կերպ է ընկալում», «այլ կերպ մտածում», «պահանջկոտ և արկածախնդիր է», միևնույն ժամանակ ցուցաբերում է ագրեսիվություն և հանգստություն: Երբ ստիպում են ինչ որ բան անել բացահայտ հակառակվում է, և չի հետևում մեծահասակների ցուցումներին: Սա հենց ժամանակակից պատանու նկարագրությունն է: Ղեռահասությունը 12-16 տարեկան երեխաների զարգացման շրջանն է, որը համապատասխանում է ավագ դպրոցական տարիքին: Բնութագրվում է կենսական ակտիվությամբ և մարմնի վերակազմավորմամբ: Այս շրջանում բացի ֆիզիկական հասունացումից տեղի է ունենում նաև բարոյական և մտավոր ուժի աճ: Ղեռահասությունը նաև անցումային տարիք է, քանի որ բնութագրվում է մանկությունից հասունություն, անհասությունից հասունություն անցումով: Նա էլ երեխա չի, բայց և մեծահասակել չի: Չարգացումը ավարտվում է մոտավորապես 16 տարեկանում՝ ղեռահասի տղայի կամ աղջկա փոխակերմամբ: Այս տարիքում նրանց մոտ լուրջ փոփոխություններ են լինում: Այն վերաբերվում է կյանքի բոլոր ոլորտներին, ինչպես նաև փոխվում է վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ: Նա բոլորից պահանջում է այլ տարբերվող վերաբերմունք իր նկատմամբ: Այս տարիքը ասոցացվում է նաև եռանդուն շարժումների, սոցիալական նշանակության, և հետաքրքրությունների բավարարման շրջան: Հոգեբանները նաև անրադարձ են կատարում այս շրջանին՝ անվանելով «ծանր աղետների» շրջան: Ներկայացնելով նրանց հիստերիան, ագրեսիվությունը և դաժանությունը:

**ա.** այս տարիքը տատանումների և ցնցումների շրջան է.

**բ.** այս փոփոխությունները հիմնված են կենսաբանական պատճառի վրա.



Դեռահասությունը նաև այն ժամանակաշրջանն է, երբ ձեռք են բերում մասնագիտություն և ծնողի ազդեցությունից ազատվելու հնարավորություն: Դեռահասությունը չունի հստակ սահմաններ, քանի որ այն կախված է կյանքի և գործունեության հատուկ պայմաններից, որոնք տարբեր են: Դեռահասի մտավոր զարգացումը բավականին առաջ է իր փորձից, նա չի կարող գիտակցել այն հնարավորությունները, որոնք իրեն տրամադրում է իր մտավոր զարգացման մակարդակը: Ստացվում է որ զարգացումն առաջ է ընկնում սովորումից և փորձից: Ինչ վերաբերում է հոգեբանության տարիքային բնութագրերին, դրանք բնութագրվում են շատ լայն փոփոխությամբ, որը հիմնված է երեխայի կյանքի և գործունեության հատուկ պայմանների, նրա դաստիարակության և կրթության անհատական տարբերակների վրա: Երբ հոգեբանները խոսում են հոգեբանության տարիքային առանձնահատկությունների մասին, նրանք նկատի ունեն տարիքի ամենատիպիկ, առավել բնորոշ գծերը՝ նշելով զարգացման ընդհանուր ուղղությունը:

### **Դեռահասների տարածված խնդիրները**

Դեռահասների կյանքի այս փուլը լի է փորձություններով և նորություններով: Նրանք կարող են զարգացնել վատ սովորություններ, որոնք մեծ հասակում կարող են լուրջ խնդիրներ առաջացնել՝ խնդիր ունենալով վարքի հետ կապված, երբ ծնողները չեն կարողանում որևէ բան անել:

Դեռահասների ամենատարածված խնդիրներից է՝

- 1. Ֆիզիկական փոփոխությունները՝ որոնք տեղի են ունենում հորմոնալ ակարդակի փոփոխության պատճառով:**
- 2. Զգացմունքային փոփոխությունները դեռահասների մոտ՝ հորմոնալ ֆոնը հազեցնում է ոչ միայն ֆիզիկական փոփոխության այլ նաև հուզականության:**

Դառնում են չափազանց զգացմունքային: Իհարկե մարմնի գործընթացների տարիքային փոփոխություններն ավելի հստակորեն համապատասխանում են տարիքին: Չնայած պետք է հաշվի առնել ուղեղի ընդունակությունները և ավելի բարձր նյարդային ակտիվությունը: Այնուամենայնիվ կյանքի, գործունեության, դաստիարակության և կրթության առանձնահատկությունները որոշիչ նշանակություն չունեն: Կախված դրանից նույն տարիքի տարբեր երեխաների մոտ մտածողությունն ու զարգացումը տարբերվում է:



## Ղեռահասության ճգնաժամը և պատճառները

Այն տարիքային ճգնաժամ է , որը առաջանում է նախադեռահասությունից պատանեկությանն անցում կատարելու ժամանակ: Ըստ հոգեբանների այն տեղի է ունենում 13 տարեկանում , սակայն այն կարող է տարբեր լինել՝ կախված տևողությունից:

Ըստ որոշ հայեցակետերի գոյություն ունի դեռահասության 2 ճգնաժամ՝

1. Մեծ՝ կրտսեր դպրոցականից դեպի դեռահասություն:
2. Փոքր՝ կրտսեր դեռահասությունից ավագ դեռահասության անցում կատարելիս:

Դեռահասությունը տարիքային հակասություն է , ըստ որի սեռական զարգացումը , սոցիալ-մշակութային զարգացումը և համաօրգանական աճի ավարտը չեն համընկնում: Մարդկության պատմական և մշակութային շրջանի սահմանները փոքր ինչ ընդլայնվում են, դրա հետևանքով առաջանու է դեռահասության տարիքը՝ որպես մանկությունից անցում չափահասության: Դեռահասությունը համարվում է ճգնաժամային, քանի որ զարգացման այս փուլում երեխան ունենում է այնպիսի պահանջներ որոնք նա չի կարող բավարարել իր անբավարար սոցիալական հասունության պատճառով: Այդ պահանջմունքներից դեպրիվացիայի աղբյուր կարող են լինել ոչ միայն արտաքին արգելքները՝ այլև ներքին արգելքները: Ըստ Է. Էրիկսոնի դա այն ժամանակահատվածն է , երբ մարդը փնտրում է աշխարհում իր տեղը, դերը, կոչումը:

### Ճգնաժամի ախտանշաններն են՝

- ուսումնական մոտիվացիայի պակաս
- մեծահասակ լինելու ձգտում
- կոնֆլիկտ ծնողների և ուսուցիչների հետ
- բողոքական վարքագիծ



• անլիարժեքության զգացում

- ընկճվածություն
- տազնապներ

### Դեռահասի հետ աշխատելու մեթոդներ

Մեզանից յուրաքանչյուրը որդեգրում է այնպիսի մեթոդներ որոնցով ավելի արդյունավետ է աշխատել դեռահասների հետ, հատկապես պետք է ընտրել այնպիսի մեթոդներ, որոնցով չես նեղացնի, չես վիրավորի իր անձը և այլն: Կարելի է առանձնացնել զրույցի մեթոդը՝ ընտրելով պարզ ու բարդ կամ բաց ու փակ հարցեր: Ինչ՞ու, ինչպե՞ս, ինչ՞ պայմաններում՝

1. Ինչո՞ւ չես փորձում հարցին լուծում տալ:
2. Ի՞նչ է պետք անել իրավիճակը փոխելու համար;
3. Ինչպե՞ս կարող ենք պայքարել խնդրի դեմ:
4. Ի՞նչ նկատի ունես երբ խոսում ես

Այս պարզ հարցերի միջոցով կարող ենք դեռահասի հետ սկսել երկխոսությունը և փորձել պարզից գնալ դեպի բարդ: Փակ հարցերը առաջարկել միանշանակ «այո» կամ «ոչ» պատասխաններով, որոնք վարկածներ են և միայն պետք է հաստատվեն կամ հերքվեն: Ըստ իս ավելի լավ է վարկածները փոխարինել բաց հարցերով, որոնք թույլ են տալիս զրուցակցին իր տարբերակը առաջարկել : Այլընտրանքային հարցերը զբաղեցնում են միջանկյալ դիրք , բայց ըստ էության դրանք նույնպես վարկածներ են : Եվ ի վերջո բոլոր վարկածները կարող են սխալ լինել: Բայց այս հարցերը տալուց առաջ պետք է ևս մի անգամ ուշադիր զննել, նայել արդյոք զրուցակցին որևէ հարցով չեք նեղացնի, կամ հարց տալիս սպասենք , որ նա անկեղծ կպատասխանի :

Օրինակ՝

Թեստ դեռահասին ճանաչելու համար

1. Ո՞րն է քո սիրած զբաղմունքը:



2. Քո ամենամեծ վախը:

3. Ի՞նչ է քեզ համար Հայրենիքը:

4. Բնութագրիր քեզ մեկ բառով:

5. Ո՞րն է քո գույնը:

6. Տարվա ո՞ր եղանակին ես քեզ նմանեցնում:

7. Առանց ինչի՞ չես պատկերացնի քո կյանքը:

8. Մարդ առանց որի չես պատկերացնի կյանքդ;

9. Ի՞նչ է քեզ համար երջանկությունը:

10. Ի՞նչ խորհուրդ կտաս ինքդ քեզ:

11. Եթե հնարավորություն ունենաս ի՞նչ կցանկանաիր փոխել:





### Գլուխ 3. Ժամանակակից դեռահասի առօրյան

Պատանեկության ժամանակ դեռահասի մոտ տեղի է ունենում լուրջ փոփոխություններ: Սա վերաբերվում է նրա կրճանքի բոլոր բնագավառներին; Չնայած որ մեծ փոփոխություն է կրում կրթական ոլորտը; Փոխվում է նաև վերաբերմունքը շրջակայի նկատմամբ: Դեռահասը երեխա չի և պահանջում է ուրիշ վերաբերմունք իր նկատմամբ: Դեռահասությունը հետաքրքրող մտքի, գիտելիքների, ազահ ցանկության, փնտրելու եղանակ է՝ հատկապես, եթե այն ունի սոցիալական նշանակություն: Սակայն սա արտահայտվում է անկազմակերպ տեսքով; Սակայն երբեմն դեռահասությունը հայտարարում են «աղետների» շրջան:

**ա.** Դեռահասությունը անձի բոլոր բնագավառներում հանկարծակի և կտրուկ փոփոխությունների ժամանակաշրջան է:

**բ.** Այս տարիքը «փոթորիկների և հարձակումների» ժամանակաշրջան է:

**գ.** Հիմնված է կենսաբանական արժեքների վրա:

Դեռահասի մտավոր զարգացումը առաջ է իր փորձից, նա չի գիտակցում այն հնարավորությունները, որ տրվում է իրեն մտավոր զարգացման փուլում: Ստացվում է որ զարգացումը առաջ է ընկնում սովորումից և փորձից:

Որոշ բնածին հատկանիշներ՝ ուղեղի ընդունակությունը, բարձր նյարդային ակտիվությունը որոշակի դեր են խաղում անհատական տարբերությունների ձևավորման մեջ:

Պատանեկություն երիտասարդների մոտ հագեցած է ցանկություններով, որոնք նրանց ճանաչողական կարծիքները բարելավելու համար է: Նա իր ժամանակի մեծ մասը ծախսում է դպրոցական նյութը յուրացնելու վրա: Ավագ դպրոցի առօրյայի հետ կապված շատ ուսումնասիրություններ է կատարվել՝ կյանքի որոշակի ասպեկտների միջոցով, ինչպիսիք են ինտեռնետային միջավայրը, աշակերտների փոխազդեցությունը, երջանկության մասին պատկերացումները: Հիմա մեծ ուշադրություն է դարձվում դպրոցական հոգեկան և ֆիզիոլոգական առողջության ուսումնասիրությանը:



## Ինտերնետից կախվածություն

Սոցիալական ցանցերը, ֆորումները, պորտալը կարողանում են օրեր շարունակ մարդուն պահել մոնիտորի արջև: Վիրտուալությունը հարմար է նրանով, որ կարող ենք շատ բան ասել, մեկնաբանել, քննել և չվախենալ դատողական մտքերից: Տանը նստած՝ կարող ենք շփվել աշխարհի տարբեր ծայրերում գտնվելով, լսել երաժշտություն գրել ու կարդալ մեկնաբանություններ և դիտել ֆիլմեր: Ու այս ամենի համար պետք է ընդամենը համացանց և ինտերնետ և կարող ես երևակայությանդ ազատություն տալ:

Բայց սրան զուգահեռ պետք է փաստենք, որ դեռահասները չեն զբաղվում ինքնակրթությամբ՝ այլ ամբողջ ժամանակը անցկացնում են վիրտուալ տիրույթում: Նրանց համար ավելի հետաքրքիր է գտնվել մի տիրույթում որտեղ իրենց ոչ ոք չի ճանաչում՝ ներկայանում են այնպես ինչպես ուզում են, և ինչպես ուզում են որ իրենց ընդունի հասարակությունը: Նրանք խուսափում են մարդկային շփումից: Այստեղից մեկ այլ խնդիր է առաջանում:

- Դադարում են պարզ մարդկային շփում ունենալուց, նամակագրվում են սոցցանցերում:

**Սպորտ**– չնայած տեխնոլոգիական առաջընթացին, արդի աշխարհում սպորտը դեռևս ապրում է: Երիտասարդները օրվա մեծ մասը անցկացնում են մարզադահլիճում;

**Հաղորդակցություն**–Սա ոչ միայն երիտասարդների համար է ակտուալ այլ նաև մյուս տարիքային խմբերում; Այս տեսակի մարդկանց համար մեծ նշանակություն ունի հաղորդակցությունը: Սրա մեջ չի մտնում «փողոցային» բառերը:

### Սերունդների հակամարտություն

Հակամարտության խնդիրները գալիս են մեծահասակների կողմից չհասկանալուց: Դա բերում է ծնողների հետ կոնֆլիկտի: Այս ամենի հետևանքով դեռահասները զնում են տանից կամ երբեմն ինքնասպանություն են գործում: Ծնողը միշտ աշխատելու է ինքն իր վրա՝ հիշելով իրեն այդ տարիքում: Այս համեմատությունն տարբեր տարիքներում առանձնահատկություն է եղել: Կան տարբեր պատճառներ, որոնք հրահրում են նման հակամարտություն.



## 1. աշխարհայացքի առանձնահատկություն

### 2. հարմարավետության գոտի

Ծնողները միշտ ունեն այն մտավախությունը, որ ազատության մեջ դեռահասը կկորցնի չափի զգացումը: Սա շատ բնական է, երբ ծնողը մտածում , եթե հիմա որևէ բան թույլ տամ, որը նախքինում արգելել եմ գուցե նա չափն անցնի և սահմանները չճանաչի: Բայց մի կողմից կարող է 1-2 անգամ չափն անցնել ու անհրաժեշտ հետևությունն անել՝ չնայած որ ծնողն այդ ամենը բավական երկար բացատրել է ու նա չի հասկացել: Ծնողը պետք է կարողանա գտնել շփման այնպիսի եզրեր, որ ընդհանուր հայտարարի գան ու միևնույն սպասելիքներն ակնկալի դեռահասից: Այն ծնողներն որոնք միշտ ճնշում են դեռահասների մեծանալուն, կայանալու ձգտումները: Արդյունքում ունենում ենք կամ ինֆանտիլ, կամ սոցիալապես ոչ ցանկալի վարքով մեծահասակներ: Այն դեռահասները , որոնք ունեն պահանջ տանը ինտեգրվելու, հաճախ չբավարարվելով փորձում են այդ պահանջները ուղղել արտաքին աշխարհ:

Կառանձնացնել մի կարևոր գործոն՝ երեխային հնարավորություն տալ՝ որպեսզի տարբեր իրադրություններում գտնի ինքն իրեն: Եթե մինչև այդ ծնողը եղել է վերահսկող, այժմ նա պետք է այլ մոտեցում ցուցաբերի՝ հավասարը հավասարի: Սա մեծ նշանակություն ունի քանի որ եթե սահուն հարաբերություն է դեռահասի և ծնողի միջև ապա դեռահասը նոր բաներ փորձելու քայլեր չի անում: Հաճախ դեռահասների վարքը բեղեք է ծնողի քայլերի նկատմամբ: Այստեղ հարցը պետք է մի քանի կողմով դիտարկել՝

1. կարող ենք ազդեցիկ գործողությունից հետո վերականգնել ամեն բան:

2. եթե ազդեցիկ վարք ցուցաբերելուց հետո փոշմանի:

3. եթե մեր վարքով մարդու հոգուն ենք դիպչում հնարավոր է վերականգնել հարաբերությունները առանց հետք թողնելու:



Դեռահասի վրա ծնողական ազեցությունը կարևոր դեր է ,բայց այն սահմանափակ է: Հասակակիցների կարծիքը ավելի կարևոր է նրանց համար: Դեռահասների արժեքային կողմնորոշումները կախված են ծնողի դիրքից: Բայց սրան զուգահեռ ձգտում է անկախության: Այստեղ օգնության է գալիս ընտանիքում դաստիարակության ոճը: Ծնողի վերահսկողությունը դեռահասի վարքի նկատմամբ, բերում է դժվարությունների:

### **Ի՞նչ է պետք դեռահասին մեծահասակից**

- Կրթական տեղնուլոգիաներ, որոնք տարբերվում են կրթական և ավագ դպրոցի տեխնոլոգիաներից:
- Դեռահասը հեռախոսի կարիք ունի:
- Դեռահասին անհրաժեշտ է մեծահասակ՝ որպես փոփոխվող աշխարհում ուղենիշ:
- Դեռահասին պետք է իրեն սիրող ընտանիք:

### **Ի՞նչ են զգում ծնողները.**

- Գրեթե հաճախ սարսափում են անցումային փուլից:
- Սպասում են այն ցնցումներին , որոնք անխուսափելի են անցումային շրջանում:
- Վախենում են , որ կմեծանա երեխան և կկորցնեն նրան:
- Իրենց հանդեպ հնազանդությունը կկորցնեն:
- Այս բոլոր վախերը երբեմն երեխան կրում է իր վրա:



## Եզրակացություն

Հետևելով Երիտասարդ սերնդի հեռանկարներին՝ գալիս ենք այն եզրահանգման, որ դեռահասները զգայուն են իրենց ուղղված քննադատությունների նկատմամբ, նրանց համար դժվար է հասարակության հետ շփումը, մասնագիտության ընտրումը, աշխատելը, ընտանիք ստեղծելը: Այս բոլոր դժվարություններին կընթացի ընթացքում բախվում է դեռահասը: Այս ընթացքում ամենափոքր սխալն անգամ կարող է նրանց հանդեպ ճակատագրական լինել: Մարդը պայքարում է իր վատ սովորույթի դեմ իր ամբողջ կյանքում, որը թույլ է տվել պատանեկության տարիներին: Նրանք փորձում են ամեն կերպ ամրապնդել իրենց դիրքերը մեծ աշխարհում, ու հաճախ բախվելով խնդիրների շեղվում են ճիշտ ուղղուց, որնել մեծ հետք է թողնում ողջ կյանքի ընթացքում: Բոլոր խնդիրները գալիս են Երիտասարդության ամենափոքր սխալներից: Այստեղ կարևոր է պահել մտավոր և ֆիզիկական առողջությունը, չհետևել նորաձևությանը անմնացորդ, միշտ ունենալ սեփական հաստատուն կարծիքը, ողջամտորեն նայել խնդիրներին և փորձել լուծումներ գտնել: Ապրել իրական կյանքում, այլ ոչ թե վիրտուալ հարթակում չնայած ավելի հարմար է իրենց;

Ի վերջո դեռահասը իր կողքին պետք է ունենա հուսալի հենարան, ով պատրաստ կլինի մշտապես օգնել իրեն, դնել ճիշտ ուղու վրա և չվիրավորել իր անձը:



## Օգտագործված գրականության ցանկ

1. Кле М. Психология подростка (психосексуальное развитие). М.,1991
2. Кон И.С. Открытие «Я». М., 1978.
3. Эльконин Д.Б. Возрастные и индивидуальные особенности младших подростков// Избр. тр. М.,1989.
4. Выготский Л.С. Педология подростка//Собр. соч.:В 6 т. М.,1984.Т 4.
5. Бернс Р. Развитие Я-концепции и воспитание. М.,1986.
6. Кулагина И.Ю., Коллюцкий В.Н.Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Учебное пособие для студентов высших учебных заведений. — М.: ТЦ «Сфера», 2001.-464с.
7. <https://medex.am/health-topics/teenage-aggression>
8. <https://erexa.am/blog/inchpes-dastiarakel-derahas-txanerin/>
9. <https://www.doctors.am/derahasutyanyan-tariqi-yndhanur-bnutagir>

